ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒԿՆԴԻՐՆԵՐԸ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

23.10.2015 18:42

Արդարդատության ակադեմիայի ունկնդիրները այսօր՝ հոկտեմբերի 23-ին, ռեկտոր Ռուբեն Մելիքյանի գլխավորությամբ հյուրընկալվել են ՀՀ փաստաբանների պալատ:

Ապագա դատավորներն ու դատախազները ՀՀ փաստաբանների պալատում ծանոթացել են մրցակցային դատավարության կողմերից մեկի փաստաբանների և մասնավորապես հանրային պաշտպանի աշխատանքներին: Հանրային պաշտպանի գրասենյակում ղեկավարի տեղակալ Վարսեր Կարապետյանը ներկայացրել է այն օրենսդրական ակտերը, որոնցով առաջնորդվում են հանրային պաշտպան նշանակելիս, ներկայացվել է հանրային պաշտպանի գործառույթները: Այնուհետև ունկնդիրները մասնագիտական քննարկում են ունեցել հանրային պաշտպանների հետ:

Փաստաբանական դպրոցում շրջայցի ժամանակ Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը ներկայացրել Դպրոց ընդունվելու և ավարտելու կարգը և ուսումնական պրոցեսի կազմակերպումը:

ՀՀ փաստաբանների պալատում նախագահ Արա Ջոհրաբյանը ողջունել է Արդարադատության ակադեմիայի ռեկտորին և ունկնդիրներին և ներկայացրել փաստաբանի բարդ ու պատասխանատու գործի մասին, կիսվել մասնագիտական փորձով: Նա կարևորել է Ակադեմիայի ունկնդիրները այցը, քնի որ հետագայում նրանք դատական նիստերի դահլիճներում հանդիպելիս կկարողանան իրացնել արդար մրցակցային իրավունք:

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })